ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

# ИСТОРИЯ И КУЛЬТУРА

## АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

# HISTORY AND CULTURE

## JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2021

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**

*Խմբագրական խորհուրդ՝*

**Միքայել Մալխասյան** (խմբագիր, պ.գ.թ., դոց.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվ.գ.դ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ., ասիստ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

*Редакционная коллегия:*

**Микаэл Малхасян** (редактор, к.и.н., доц.), **Ашот Мелконян** (академик НАН РА, д.и.н., проф.), **Арам Симонян** (чл.-кор. НАН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (д. иск. н., проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Арман Егиазарян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., проф.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н., асист.).

Editor-in-Chief: Doctor of Sciences, Prof. **Edik Minasyan**

*Editorial Board:*

**Mikayel Malkhasyan** (Editor, PhD in History, Associate Prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Aram Simonyan** (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, Prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, Prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, Prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, Prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences, Prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, Prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, Prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, Prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, Prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, Prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, Prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, Prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, Associate Prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, Associate Prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, Associate Prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History, Assistant Prof.).

**ISSN 1829-2771**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
# СОДЕРЖАНИЕ / CONTENT

## **ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ** / ИСТОРИЯ / HISTORY


**Виген Цатрян, Руслан Кобзарь** - К ВОПРОСУ О ЛОКАЛИЗАЦИИ И ЭТИМОЛОГИИ БАСОРОПЕДЫ В СВЕТЕ ЗАВОЕВАНИЙ АРТАШЕСА I У МИДЯН ........ 7

**Վիգեն Ծատրյան, Ռուսլան Կոբզար** – ԲԱՍՈՐՈՊԵԴԱՅԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՍՏՈՒԳԱ-ԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ՄԵԴԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ........ 22

**Vigen Tsatryan, Ruslan Kobzar** – TO THE QUESTION OF THE LOCALIZATION AND ETYMOLO-GY OF BASOROPEDA IN THE LIGTH OF THE CONQUESTS OF ARTASHES I FROM THE MEDES........ 22

**Արգիշտի Վարդանյան** – ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՏՈՀՄԱՃՅՈՒՂԻ ՄԻ ՃՇԳՐՏՈՒՄ........ 23

**Аргишти Варданян** – ОДНО УТОЧНЕНИЕ ПРАВЯЩЕЙ ДИНАСТИИ МАМИКОНЯНОВ .... 29

**Argishti Vardanyan** – A CORRECTION OF THE GENEALOGY OF THE MAMIKONYANS PRINCELY FAMILY ........ 29

**Միքայել Մալխասյան** - 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԱՌԱՆՁԻՆ ՎԱՐՉԱՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ........ 30

**Микаэл Малхасян** - ОБЩАЯ КАРТИНА РАСПРЕДЕЛЕНИЕ НАСЕЛЕНИЯ В АРМЕНИИ В XVI ВЕКЕ НА ПРИМЕРЕ ОТДЕЛЬНЫХ АДМИНИСТРАТИВНЫХ ЕДИНИЦ........ 38

**Mikayel Malkhasyan** - GENERAL PICTURE OF POPULATION DISTRIBUTION IN ARMENIA IN THE 16$^{TH}$ CENTURY ON THE EXAMPLE OF SEVERAL ADMINISTRATIVE UNITS........38

**Ֆելիքս Մովսիսյան** - «ՄԱՍՅԱՑ ԱՂԱՎՆԻ» ԱՄՍԱԳԻՐԸ ՀՌՈՄԻ ՊԻՈՒՍ IX ՊԱՊԻՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ........ 39

**Феликс Мовсисян** - ЖУРНАЛ «МАСЬЯЦ АГАВНИ» («МАСИССКИЙ ГОЛУБЬ») О ЛИШЕНИИ СВЕТСКОЙ ВЛАСТИ ПАПЫ РИМСКОГО ПИЯ IX ........ 54

**Feliks Movsisyan** - THE MAGAZINE “THE MASYATS AGHAVNI’’ ON DEPRIVATION OF POPE PIUS IX OF HIS SECULAR POWER........ 55

**Հովիկ Գրիգորյան** - ՀՅԴ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՏՈՇԻ ԱՂԵՏԻՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԱՄԻՍՆԵՐԻՆ (1905 Թ. ՄԱՐՏ - ՀՈՒԼԻՍԻ ԿԵՍԵՐ)........56

**Овик Григорян** - ДЕЯТЕЛЬНОСТЬ УКАЗЫВАЮЩЕГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН В МЕСЯЦЫ, ПОСЛЕДУЮЩИЕ ЗА ТРАГЕДИЕЙ НА ВИТОШЕ (МАРТ - СЕРЕДИНА ИЮЛЯ 1905 Г.) ........ 72

**Hovik Grigoryan** - THE ACTIVITIES OF THE INDICATIVE ORGANIZATION OF ARF DASHNAK-SUTYUN IN THE MONTHS AFTER THE VITOSH DISASTER (FROM MARCH TO MID-JULY, 1905)........ 73

**Գայանե Հովհաննիսյան** – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԺՈՂՈՎՐԴԱ-ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ - 1930-ԱԿԱՆ ԹԹ. ....... 74

**Гаяне Оганнисян** – ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 1920-Х ГГ. – В 1930-Х ГГ........ 82

**Gayane Hovhannisyan** – DEMOGRAPHIC PROCESSES IN THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION IN THE SECOND HALF OF THE 1920S – IN THE 1930S........ 83

**Էդիկ Մինասյան, Արտավազդ Դարբինյան** - ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՀԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1991-1994 ԹԹ.)........84

**Эдик Минасян, Артавазд Дарбинян** – ОБ УЧАСТИИ СОТРУДНИКОВ И СТУДЕНТОВ ЕРЕВАНСКИХ ВУЗ-ОВ В ПЕРВОЙ АРЦАХСКОЙ ВОЙНЕ (1991-1994 ГГ.)........ 89

**Edik Minasian, Artavazd Darbinian** – THE PARTICIPATION OF YEREVAN UNIVERSITIES IN THE FIRST ARTSAKH WAR (1991-1994)........ 89

**Դավիթ Բարսեղյան** - ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՊԱՆՆԵՐԻ ԿՈՐՊՈՒՍԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ........ 90

**Давит Барсегян** – ЗНАЧЕНИЕ КОРПУСА СТРАЖЕЙ ИСЛАМСКОЙ РЕВОЛЮЦИИ В ОБЕСПЕЧЕНИИ ВНУТРИПОЛИТИЧЕСКОЙ СТАБИЛЬНОСТИ........ 95

**Davit Barseghyan** – THE IMPORTANCE OF THE ISLAMIC REVOLUTIONARY GUARD CORPS IN ENSURING INTERNAL POLITICAL STABILITY ........ 95

**Լիլիթ Մակարյան** – ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920 Թ. ԵՎ 2018 Թ. ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ (ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)........ 96

**Лилит Макарян** – ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В АРМЕНИИ В 1920 Г. И В 2018 Г. ПОСЛЕ СМЕНЫ ВЛАСТИ (СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ) ........ 103

**Lilit Makaryan** – THE POLITICAL SITUATION IN ARMENIA IN 1920 AND IN 2018 AFTER THE POWER SHIFT (COMPARATIVE ANALYSIS) ........ 103

**Էդիկ Մինասյան** – «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 20-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ 21-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ... 104

**Эдик Минасян** – ДЕЯТЕЛЬНОСТЬ ФОНДА "ТУФЕНКЯН" ПО РЕАЛИЗАЦИИ ПРОГРАММ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ В КОНЦЕ XX И В ДВУХ ДЕСЯТИЛЕТИЯХ XXI ВЕКА........ 113

**Edik Minasyan** – ACTIVITIES OF "TUFENKIAN" FOUNDATION TO IMPLEMENT THE ECONOMIC DEVELOPMENT PROGRAMS OF THE REPUBLIC OF ARTSAKH AT THE END OF THE 20TH CENTURY AND THE TWO DECADED OF THE 21ST CENTURY ........ 114

**Էդգար Չախոյան** – ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1991-2019 ԹԹ.)........ 115

**Эдгар Чахоян** - ВОПРОСЫ ПЕРЕГРУППИРОВКИ ВООРУЖЕННЫХ СИЛ В КОНТЕКСТЕ ОТНОШЕНИЙ ГРУЗИИ И США НА ЮЖНОМ КАВКАЗЕ (1991-2019 ГГ.)........ 134

**Edgar Chakhoyan** - ARMED FORCES REDEPLOYMENT ISSUES IN THE CONTEXT OF GEORGIA-US RELATIONS IN THE SOUTH CAUCASUS (FROM 1991 TO 2019)........ 135

**ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ** / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

**Ռաֆիկ Նահապետյան** – ԱՂՁՆԻՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)........ 136

**Рафик Наапетян** – ОБ ИЗУЧЕНИИ ЖИЛЫХ КОМПЛЕКСОВ АГДЗНИКА (ВТОРАЯ ПОЛОВИНА XIX В. И НАЧАЛО XX В.) ........ 146

**Rafik Nahapetyan** – ON STUDYING OF RESIDENTIAL COMPLEXES OF AGHDZNIK (SECOND HALF OF THE 19TH CENTURY AND THE BEGINNING OF THE 20TH CENTURY)........ 147

**Արտակ Խաչատրյան** – ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ԷԹՆՈԳԵՆԵԶԻՍԻ ՓՆՏՐՏՈՒՔՆԵՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ........ 148

**Артак Хачатрян** – ПОИСКИ ЭТНОГЕНЕЗИСА АЗЕРБАЙДЖАНЦЕВ И КУЛЬТУРНАЯ ПОЛИТИКА В НКАО. ........ 155

**Artak Khachatryan** – THE SEARCH FOR THE ETHNOGENESIS OF AZERBAIJANIS AND CULTURAL POLICY IN THE NKAO ........ 155

## ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

**Աննա Դավթյան** – 13-ՐԴ ԴԱՐԻ ԽԱՉՔԱՐԵՐԻ ԶԱՐԴԱՁԵՎԵՐԸ ........ 156

**Анна Давтян** - ОРНАМЕНТЫ ХАЧКАРОВ XIII ВЕКА ........ 164

**Anna Davtyan** - THE ORNAMENTS OF THE 13TH CENTURY KHACHKARS (CROSS-STONES) ........ 164

**Ռուզաննա Միքայելյան** – ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ «ՀՈԿՏԵՄԲԵՐ» ԿԻՆՈԹԱՏՐՈՆԻ ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻԶԱՅՆԸ ........ 172

**Рузанна Микаелян** – ДИЗАЙН ИНТЕРЬЕРА КИНОТЕАТРА «ОКТЯБРЬ» В ГОРОДЕ ГЮМРИ ........ 175

**Ruzanna Mikayelyan** – THE INTERIOR DESIGN OF CINEMA “HOKTEMBER” IN GYUMRI ........ 176

**Զահրա Մալեքի** – ՀԱՖԵԶԻ ԳԱԶԵԼՆԵՐԸ ՖԱՐԱՀ ՕՍՈՒԼԻԻ ԱՉՔԵՐՈՎ ........ 177

**Захра Малеки** – ГАЗЕЛИ ХАФИЗА ГЛАЗАМИ ФАРАХ ОССУЛИ ........ 187

**Zahra Maleqi** – HAFEZ’S GAZELLES AS SEEN BY FARAH OSSULI ........ 187

**Մարինե Գևորգյան, Գայանե Թովմասյան** – ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ ԵՎ ՄԱՐԶՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ........ 188

**Марине Геворкян, Гаяне Товмасян** – ВОВЛЕЧЕНИЕ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ПАМЯТНИКОВ АРАГАЦОТНСКОЙ ОБЛАСТИ РА В СФЕРУ ТУРИЗМА И АНАЛИЗ ВОЗМОЖНОСТЕЙ РАЗВИТИЯ ТУРИЗМА В РЕГИОНЕ ........ 198

**Marine Gevorgyan, Gayane Tovmasyan** – INVOLVEMENT OF HISTORICAL AND CULTURAL MONUMENTS OF ARAGATSOTN REGION OF THE RA INTO TOURISM SPHERE AND THE ANALYSIS OF TOURISM DEVELOPMENT OPPORTUNITIES IN THE REGION ........ 198

## ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

**Լիլիթ Հակոբյան** – ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ ........ 199

**Лилит Акобян** - СОГЛАСОВАНИЕ ЧЛЕНОВ ПРЕДЛОЖЕНИЯ И ЕГО ВЫРАЖЕНИЕ В ПРОИЗВЕДЕНИИ “ИСТОРИЯ АРМЕНИИ” КИРАКОСА ГАНДЗАКЕЦИ ........ 204

**Lilit Hakobyan** – PECULIARITIES OF THE AGREEMENT BETWEEN THE SENTENCE PARTS AND ITS EXPRESSION IN KIRAKOS GANDZAKETSI’S “HISTORY OF THE ARMENIANS” ........ 205

**Վահագն Հակոբյան** – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ ........ 206

**Ваагн Акобян** – ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА ........ 218

**Vahagn Hakobyan** – FROM DAVID ANANUN’S LETTERS ........ 218

## ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

**Լիլիթ Մինասյան** - ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ (ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ) ........ 219

**Лилит Минасян** - ИСПОЛЬЗОВАНИЕ ИСТОЧНИКОВ НА УРОКАХ ИСТОРИИ ДЛЯ РАЗВИТИЯ ИСТОРИЧЕСКОГО И КРИТИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ УЧАЩИХСЯ (ИССЛЕДОВАНИЕ ДЕЙСТВИЙ) ........ 229

**Lilit Minasyan** - USING SOURCES IN THE HISTORY CLASSROOM FOR DEVELOPING STUDENTS' HISTORICAL AND CRITICAL THINKING (ACTION RESEARCH) ........ 229

**Մերի Հովհաննիսյան** - «ԴԵԲԱՏ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒ-ԹՅՈՒՆՆԵՐԸ ........ 230

**Мери Оганнисян** - ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ МЕТОДА ДЕБАТОВ ........ 236

**Meri Hovhannisyan** - FEATURES OF USING THE DEBATE METHOD ........ 236

**Արմեն Խաչիկյան** – ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՉԱՓՄԱՆ ՌԱԶՄԱՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎՈՒՄ. ՍՈՑԻՈՄԵՏՐԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ........ 237

**Армен Хачикян** – ВОЕННО-СОЦИОЛОГИЧЕСКАЯ МЕТОДОЛОГИЯ ИЗМЕРЕНИЯ ЛИДЕРСТВА В ВОИНСКИЙ КОЛЛЕКТИВАХ. ПРИМЕНЕНИЕ СОЦИОМЕТРИЧЕСКОГО МЕТОДА В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РА ........ 246

**Armen Khachikyan** – MILITARY SOCIOLOGICAL METHODOLOGY OF MEASURING LEADERSHIP IN MILITARY TEAM. APPLICATION OF SOCIOMETRIC METHOD IN THE RA ARMED FORCES ........ 246

## ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ / РЕЦЕНЗИИ / REVIEWS

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ, ՄԻՔԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԼԻԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆՆ ԸՍՏ ԱՆՏԻԿ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՐԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 388 ԷՋ: ........ 247

ՀՈՎՆԱՆ ՋԱՆՅԱՆ (ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱՋԱՆՅԱՆ), ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ, ԵՐ., ԷԴԻՏ ՊՐԻՆՏ, 2020, 448 ԷՋ: ........ 247

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԸՆԴՄԵՋ ՇՂԹԱՆ ԴԱՐԵՐԻ ԽՈՐՔԻՑ ՄԻՆՉԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԻԶԲ (ՊԱՏՄԱԲԱՆ-ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԵՏԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ), ԵՐԵՎԱՆ, ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏ., 2020, 428 ԷՋ: ........ 250

ՆՈՐ ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱ-ԿԻՑ ՀԵՐՈՍ ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Э. Г. МИНАСЯН, АРМЯНКИ В ГОДЫ ВТОРОЙ МИРО-ВОЙ И ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (1939-1945), МОНОГРАФИЯ, РОСТОВ-НА-ДОНУ–ТАГАНРОГ, ИЗ.-ВО ЮЖНОГО ФЕДЕРАЛЬНОГО УНИВЕРСИТЕТА, 2021, 284С.) ........ 252

## ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ ........ 255

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ ........ 258

## ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴ

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ (1950-2021) ........ 263

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ** ........ 266

**INFORMATION ABOUT THE AUTHORS** ........ 267

**Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ** ........ 268

**NOTICE FOR THE AUTHORS** ........ 268

**«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ** ........ 269

**Մերի Հովհաննիսյան**

# «ԴԵԲԱՏ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

***Հիմնաբառեր.*** ուսուցման մեթոդ, փոխգործուն մեթոդ, բանավեճ, դեբատ, դեբատի փուլեր, դեբատի գործառույթներ, մոտիվացիա, հաղորդակցական հմտություններ, քննարկում, փաստարկ:

*Դեբատը արդյունավետ մեթոդ է սովորողների մոտ ձևավորելու ու վարգացնելու իրենց դիրքորոշումները հստակորեն ու տրամաբանված ձևակերպելու, առաջ քաշած գաղափարների հաստատման համար համոզիչ փաստեր ու փաստարկներ գտնելու հմտություններ: Դեբատին մասնակցելու արդյունքում ձեռք բերված հմտությունները կիրառելի են ինչպես ուսումնական գործընթացում, այնպես էլ առօրյա կյանքում:*

*«Դեբատ» մեթոդի կիրառումն ուսումնական գործընթացում նպաստում է հաղորդակցական, մասնավորապես պրուցակցին լսելու, դիմացինին ընկալելու, հաղորդակից լինելու, համագործակցություն դրսևորելու հմտությունների, հռետորական ծիրքի վարգացմանը և սովորողի ինքնավստահության ամրապնդմանը:*

*Դեբատը ոչ միայն հետաքրքիր զբաղմունք է, դաս, այլև արդյունավետ միջոց սովորողների մոտ ժամանակակից հասարակության պայմաններում հաջող կենսագործունեության համար անհրաժեշտ և օգտակար որակների, մասնավորապես հաղորդակցական հմտությունների ձևավորման ու վարգացման առումով: Դեբատը նաև պատկերացում է ձևավորում խոսքի կառուցվածքի մասին: Դեբատում սյուժետային խոսքի օրինակ կարող է լինել առաջին բանախոսի ելույթը՝ ողջունել մասնակիցներին, ներկայացնել թիմին և իրեն, հիմնավորել դեբատային թեմայի արդիականությունը, սահմանել թեմայի հասկացությունները, ներկայացնել փաստարկները, եվրահանգումը և շնորհակալություն հայտնել ուշադրության համար: Սովորողների կողմից դեբատի ելույթի կառուցվածքային և սյուժետային առանձնահատկությունների ըմբռնումը հետագայում նրանց թույլ կտա հստակ ծրագիր ունենալ հանրային ելույթներում հանդես գալու համար:*

Ուսումնական հաստատությունների առաքելությունը ոչ միայն որակյալ և ժամանակի պահանջներին համապատասխան կրթություն ապահովելն է, այլև հասարակության այնպիսի անդամ կրթելն ու դաստիարակելը, որն օժտված է հանդուրժողականությամբ, նպատակասլացությամբ, պատասխանատվությամբ, իրազեկվածությամբ, քննադատական մտածողությամբ: Բանավեճը նպաստում է սովորողի մեջ նշված որակների ձևավորմանը:

Բանավեճը խոսքային հաղորդակցության կարևորագույն ձևերից է, որի մասնակիցները, հակառակ տեսակետներ ու գաղափարներ արտահայտելով, ձգտում են հասնել փոխհամաձայնության կամ փոխհամոզման: Այն փոխգործուն (ինտերակտիվ) մեթոդների շարքում է և առանձնանում է հատկապես սովորողների մտածողության, ակտիվության զարգացման, գիտելիքների որոնման ու համալրման, մտքերի փոխանակման, գործնական հմտությունների մշակման լայն հնարավորություններով: «Լինելով մարդկային հաղորդակցության, իմացության և գիտելիքի զարգացման ընդհանուր օրինաչափություն՝ բանավեճերը մեթոդաբանական առումով հանձնարարելի են մտավոր գործունեության ամենատարբեր բնագավառներում»[1]:

* Հոդվածը ներկայացվել է 08.07.2021 թ., գրախոսվել՝ 20.07.2021 թ., ընդունվել տպագրության՝ 30.07.2021 թ.:

[1] *Հովհաննիսյան Հ., Բանավեճի տեսություն և արվեստ. փիլիսոփայական քննախոսություն, Երևան, 2019, էջ 138:*

Ի տարբերություն բանավեճի, որը կարող է կիրառվել ուսումնական գործընթացի տարբեր փուլերում որպես և՛ ինքնուրույն մեթոդ, և՛ այլ մեթոդների զուգակցված հնար, դեբատը՝ որպես քննարկման կամ բանավեճի տեսակ, ունի կիրառության առանձնահատկություններ և որոշակի սահմանափակումներ: «Դեբատը գաղափարների, դատողությունների, կարծիքների նպատակային և կարգավորված (կառուցվածքային) փոխանակում է»[1]:

«Դեբատ» բառը ծագում է ֆրանսերեն «debats» բառից, որը նշանակում է «մտքերի փոխանակություն, վեճ»[2], «ելույթների միջոցով կատարվող քննարկումներ»: Դեբատի ակունքները կարելի է գտնել Հին Հունաստանում, որտեղ այն դիտարկվել է որպես ժողովրդավարության դրսևորման տարր: XX դարի կեսերից Եվրոպայում տարածում գտան հռետորական արվեստի և դեբատի դասընթացները: Վերջին տասնամյակներում դեբատը լայնորեն կիրառվում է որպես ուսուցման փոխգործուն մեթոդ, երբ որևէ խնդիր քննարկվում է տարբեր տեսակետների առկայությամբ: Ուսուցման գործընթացում դեբատի արդյունավետության անդրադարձ է կատարվել Վ. Զենովիչի, Ե. Կալինկինայի, Օ. Լիտովչենկոյի, Մ. Նեժուրինայի, Գ. Օբվինցևայի, Յ. Ֆիլոնովայի և ուրիշների աշխատություններում[3]: Պ. Գուրվիչը դեբատը սահմանում է որպես ուսուցման տեխնոլոգիա, որն ակտիվացնում է մտավոր գործունեությունը և ստեղծագործականությունը՝ հնարավորություն տալով պաշտպանելու սեփական կարծիքը[4]: Ըստ Ի. Սեմկոյի՝ դեբատը ուսուցման ռազմավարություն է, որը հիմնված է հասարակական և քաղաքական ընթացիկ իրադարձությունները վերլուծելու, քննարկվող խնդրի վրա կենտրոնանալու, տեղեկատվություն հավաքելու, մշակելու, կիրառման հնարավորությունները ստեղծագործաբար ընկալելու, սեփական տեսակետը որոշելու, թիմում փոխազդեցություն, համատեղ գործունեություն ծավալելու վրա[5]: Դեբատի առանձնահատկությունն այն է, որ թույլ է տալիս համակողմանիորեն դիտարկել խնդիրը՝ մասնակիցներին հնարավորություն տալով ավելի լավ հասկանալու միմյանց դիրքորոշումները:

Դեբատը նպաստում է սովորողների՝

- ուսումնառության մոտիվացիայի ձևավորմանը,
- սեփական ուժերի նկատմամբ վստահության ամրապնդմանը,
- մտահորիզոնի ընդլայնմանը,
- քննադատական և տրամաբանական մտածողության, մտավոր կարողությունների զարգացմանը,
- համագործակցային, հետազոտական և կազմակերպչական հմտությունների զարգացմանը,
- ստեղծագործական հմտությունների զարգացմանը,
- հաղորդակցական հմտությունների զարգացմանը, մասնավորապես զարգացնում է մտքերը ձևակերպելու և բանավոր խոսքի, ինչպես նաև հրապարակային ելույթ ունենալու հմտություններ:

---

[1] *Короткова М. В., Методика проведения игр и дискуссий на уроке истории, Москва, 2001, с. 16.*

[2] *Տե՛ս Словарь иностранных слов, 15-е изд., испр., Москва, 1988, с. 147:*

[3] *Տե՛ս Зенович В. А., Формирование коммуникативной компетенции на уроках истории // Актуальные проблемы теории и методики преподавания истории и обществознания: к 70-летию исторического факультета Псковского государственного университета, Сборник материалов III Международной научно-практической конференции, 2016, с. 83-92; Калинкина Е. Г., Дебаты на уроках истории. Методические рекомендации по использованию методики дебатов на уроке истории // История и обществознание в школе, Н. Новгород, НГЦ, 2003, с. 68-74; Обвинцев Г. Е., Дебаты как средство развития коммуникативной компетенции у школьников // Теория и практика образования в современном мире Материалы V Международной научной конференции, 2014, с. 170-172; Филонова Ю. А., Виды учебных дебатов в дидактике // Человек в информационном пространстве сборник научных трудов. Под общей редакцией Т. П. Курановой, 2015, с. 101-105; Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ., Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 2004, էջ 81-85:*

[4] *Տե՛ս Гурвич П. Б., Основы обучения устной иностранной речи на языковых факультетах, Владимир, 1972, с. 124:*

[5] *Տե՛ս Калинкина Е. Г., Дебаты на уроках истории. Учебно-методическое пособие, Москва, 2002, с. 151:*

Դեբատը կարելի է կիրառել տարբեր դասընթացներում: Մեթոդը կիրառվում է երկու հակադիր խմբերի կամ թիմերի մասնակիցների միջև նախապես ամրագրված թեմաների հիմքի վրա: Մասնակիցներից յուրաքանչյուրը հետաքրքրված է իր տեսակետը կամ դրույթը հաստատող փաստարկներով[1]: Դեբատի անցկացման հիմնական սկզբունքներն են՝

- հարգալից վերաբերմունքը,
- հանդուրժողականությունը,
- արդարամտությունն ու ճշմարտախոսությունը,
- հաղթող-պարտվողի բարդույթից զերծ մնալը[2]:

Դեբատը ենթադրում է ուսումնական գործընթացում մրցակցության տարրի առկայություն, ինչն էլ նպաստում է սովորողների կայուն մոտիվացիայի ապահովմանը և ներգրավմանը ուսուցման որոնողական և ճանաչողական գործունեության մեջ, որը կազմակերպվում է ներքին դրդապատճառների հիման վրա: Այն թույլ է տալիս գնահատել որոշակի իրավիճակ՝ հիմնվելով անձնական փորձի վրա, և իրականացնել համատեղ գործունեություն՝ ակտիվացնելով անձնային կողմնորոշումն ուրիշի նկատմամբ[3]: Այլ կերպ ասած՝ ուսուցման գործընթացում դեբատի կիրառումը նպատակաուղղված է լուծելու 4 առանցքային խնդիր.

1. **ուսուցողական**. նպաստում է սովորողների նախկինում ձեռք բերված գիտելիքների կիրառմանը, արդիականացմանը, նոր գիտելիքների և հմտությունների ձեռքբերմանը,
2. **զարգացնող**. նպաստում է սովորողի մտավոր, լեզվական որակների, ստեղծագործական կարողությունների, հաղորդակցական, համագործակցային, իրերը, երևույթներն ու գաղափարները տարբեր տեսանկյուններից դիտարկելու հմտությունների ձևավորմանը, տրամաբանության, քննադատական մտածողության զարգացմանը,
3. **դաստիարակիչ**. սովորողների մոտ ձևավորում է բարեկրթություն, տարբեր կարծիքների կամ մոտեցումների նկատմամբ հարգալից վերաբերմունք, հանդուրժողականություն, համբերատարություն,
4. **հաղորդակցական**. ուսուցման գործողություններն իրականացվում են միջանձնային հաղորդակցության մեջ, համատեղ գործունեության ընթացքում[4]:

Դեբատների պատրաստումն ու անցկացումը ենթադրում է խմբային աշխատանքների կազմակերպում: Նախապես առանձնացվում են խմբեր կամ թիմեր, և նախընտրելի է յուրաքանչյուր խմբում ընդգրկել 3-4 մասնակից: Խմբային աշխատանքը սովորողներին թույլ է տալիս ձեռք բերել մի շարք էական հատկություններ, ինչպիսիք են փոխօգնությունը, համատեղ լուծում մշակելու կարողությունը, փոխզիջումների որոնումը, իրենց տեսակետը ողջամտորեն պաշտպանելու ունակությունը և այլ կարծիքների ու դիրքորոշումների նկատմամբ հանդուրժողականությունը: Դեբատն ունի 7 հիմնական բաղադրիչ (տե՛ս Գծագիր 1):

Թեման ձևակերպվում է որպես պնդում: Առաջին թիմի բանախոսը ներկայացնում է խմբի դիրքորոշումը՝ առաջադրելով խնդրին առնչվող փաստարկները: Հանդես գալով որպես պնդումը պաշտպանող կողմ՝ նշված խմբի բանախոսները փորձում են գնահատողներին համոզել իրենց ներկայացրած դիրքորոշման ճշմարտացիությունը: Երկրորդ թիմը՝ որպես պնդումը ժխտող կողմ, հանդես է գալիս հակափաստարկներով՝ ժխտելով կամ մերժելով նախորդ թիմի դիրքորոշումը: Քննարկման ընթացքում, բացի փաստարկներից, կարող են ներկայացվել նաև դիրքորոշումն ապացուցող նյութեր՝ փաստեր, մեջբերումներ և այլն[5]:

---

[1] *Տե՛ս Perelman Ch., Olbrechts-Tyteca L., Traite de l'argumentation, Editions de l'universite de Bruxelles, 2008, p. 49-50:*

[2] *Տե՛ս Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ., նշվ. աշխ., էջ 85:*

[3] *Տե՛ս Щукин А. Н., Современные интенсивные методы и технологии обучения иностранным языкам: учебное пособие. 2-е изд., Москва, 2010, с. 28:*

[4] *Տե՛ս Калинкина Е., Современные образовательные технологии: дебаты в преподавании истории и обществоведческих дисциплин // Основы гражданского образования: Сборник методических материалов, Н. Новгород, НГЦ, 2002, с. 33-41:*

[5] *Տե՛ս Светенко Т. В., Путеводитель по дебатам: Учебное пособие для педагогов и учащихся, Москва, 2001, с. 54-55:*




*Գծապատկեր 1*

Դեբատում առանձնացվում է նաև հանդիպակաց հարցերի փուլ, երբ մասնակիցները հակառակ թիմի բանախոսներին ուղղում են հարցեր, ուշադիր լսում նրանց պատասխանները և պատասխանում նրանց առաջադրած հարցերին: Երկու կողմերի փաստարկները լսելուց և համապատասխան արձանագրումներ կատարելուց հետո գնահատողները, մանրամասնորեն վերլուծելով բանախոսների ելույթները, ամփոփում են արդյունքները:

Այսպիսով՝ դեբատի անդամներն են՝

1. պնդումը պաշտպանող և հերքող **թիմերը**,
2. թիմերի ներկայացումների ուժեղ և թույլ կողմերն արձանագրող **մրցավարները**,
3. դեբատի կանոնների պահպանումը վերահսկող **ժամապահը**,
4. սովորողների գործունեությունը, միջանձնային հարաբերությունների կարգավորումը ուշադրության կենտրոնում պահելով՝ դեբատային քննարկումը վերահսկող **ուսուցիչը,**
5. թիմերի՝ առավել համոզիչ փաստարկները որոշող **գնահատող կողմ**:

Դեբատն անցկացվում է չորս փուլով.




*Գծապատկեր 2*

Նախապատրաստական փուլում իրականացվում է թեմային առնչվող նյութերի ուսումնասիրում, բանավեճի անցկացման փուլում ծավալվում է դեբատային քննարկումը, ներկայացվում են փաստարկները, եզրափակիչ փուլում տրվում են հանդիպակաց հարցերը, իսկ կշռադատման փուլում ներկայացվում է դեբատի արդյունքը:

Դեբատի նպատակային գործառույթներն ու հնարավորությունները լայն են: Այն ունի նաև սոցիալականացման գործառույթ, որի կարևորությունը պայմանավորված է նրանով, որ դեբատը մանկավարժական գործիք է, մասնակիցներին քաղաքացիական հասարակու-

թյան նորմերն ու արժեքները ծանոթացնելու մեխանիզմ, որը սովորողներին հնարավորություն է տալիս հարմարվելու ժամանակակից հասարակության պայմաններին, ինչը ենթադրում է մրցակցության, բանակցությունների վարման, սեփական շահերը պաշտպանելու հմտություններ՝ հիմնվելով առկա գիտելիքների և դրանք կիրառելու հմտությունների վրա:

Դեբատի դաստիարակչական գործառույթը պայմանավորված է նրանով, որ այն մասնակիցներին հնարավորություն է տալիս մշակելու անկախ գնահատականներ, բարոյական ու աշխարհայացքային դիրքորոշում և վարքագծային վերաբերմունք, հանդես բերելու հաղորդակցական բարձր մշակույթ, շփվողականություն, փոխզիջման գնալու կարողություն:

Դեբատի զարգացման գործառույթն արտահայտվում է նրանով, որ մասնակիցներին հնարավորություն է տալիս զարգացնելու կամքը, հիշողությունը, մտածողությունը, այդ թվում՝ համեմատելու, վերլուծելու, ընդհանրություններ ու տարբերություններ գտնելու, անձի համար կարևոր հարցերի վերաբերյալ բազմազան տեղեկատվություն ստանալու և ինքնուրույն վերլուծելու հմտություններ:

Նշված մեթոդի դիդակտիկ նշանակությունը պայմանավորված է նրանով, որ դեբատային քննարկումները հիմք են սովորողների գործնական հմտությունների, ինչպես նաև մարդկային անհրաժեշտ և կարևորագույն որակների ձևավորման համար: Դեբատն ակտիվացնում է, գործածության մեջ դնում արդեն սովորածը՝ ներառելով անձի և թիմի կարողությունների բարձրացման հինգ հիմնական սկզբունքների օգտագործում.

1) անձնական հաղորդակցության սկզբունքը,
2) ուսումնական նյութի և գործընթացի վրա հիմնված կազմակերպչական սկզբունքը,
3) կոլեկտիվ փոխգործակցության սկզբունքը,
4) վարժություններում բազմագործառութայնության սկզբունքը,
5) ուսումնական գործընթացի կազմակերպման կենտրոնացման սկզբունքը:




*Գծագիր 3*

Ըստ անձնային հաղորդակցության սկզբունքի՝ մանկավարժական գործընթացի կառուցվածքում առաջատարը պետք է լինի ոչ թե առարկան կամ ուսումնական խնդիրը, այլ դրա կապը սովորողի ներաշխարհի հետ: Երբ արտաքին աշխարհը ներկայացվում է ուսումնական առաջադրանքով, այդ դեպքում կարիքը, շարժառիթը, հետաքրքրությունները,

ձգտումները ներառվում են անձի և սոցիալական միջավայրի միջև հարաբերություններում: Զարգացման ուսուցման մեխանիզմը գործում է այն ժամանակ, երբ փոխազդեցության գործընթացը միաձուլվում է ուսուցման գործընթացին: Այս դեպքում է, որ մանկավարժական գործընթացի կենտրոնում ոչ թե ուսումնական առարկայի նկատմամբ վերաբերմունքն է, այլ մարդկանց վերաբերմունքը միմյանց նկատմամբ տվյալ առարկայի առումով[1]:

Հայոց լեզվի դասընթացում, օրինակ, այս մեթոդը կարելի է կիրառել հատկապես քերականական վիճելի պնդումների ու սահմանումների ուսումնասիրության ժամանակ: Դեբատը գրական ընթերցանության ժամանակ հաճախ կիրառվում է, երբ անհրաժեշտ է լինում քննադատել կամ արդարացնել գրական այս կամ այն հերոսին:

Այսպիսով՝ դեբատը զարգացնում է սովորողների խոսքային հաղորդակցման բոլոր չորս հմտությունները՝ լսելը, կարդալը, գրելը, առաջին հերթին՝ խոսելը: Դեբատին նախապատրաստվելու փուլում բանախոսները ուսումնասիրում են նյութը, հղումներ, ծանոթագրություններ, գրառումներ կատարում՝ զարգացնելով կարդալու և գրելու հմտությունները, հարստացնում են թեմայի վերաբերյալ իրենց գիտելիքները, ձևավորում են քննադատական մտածողություն, փաստերը և տեսակետները տարբերելու, վերլուծելու հմտություններ, միմյանց հարցեր ուղղելիս կատարելագործում են ունկնդրման և խոսելու հմտությունները:

Դեբատը կարող է կիրառվել որպես դասի և՛ տեսակ, և՛ բաղադրիչ՝ ուսուցման մեթոդ, ինչպես նաև որպես արտադասարանային պարապմունք: Առանձնացվում են դեբատի խմբային և անհատական տեսակները: Վ. Սվետենկոն իր «Դեբատի ուղեցույց» գրքում դեբատները դասակարգում է հետևյալ կերպ:

• *«Դասական դեբատներ»:* Սա մի ձևաչափ է, որում ներգրավված են երեք անդամներից բաղկացած երկու թիմեր, իսկ մնացած սովորողները պասիվ ունկնդիրներ են կամ դատավորներ: Այնուամենայնիվ, դժվար է բոլորին այս կամ այն կերպ ներգրավել նման դեբատի մեջ, ուստի այս տեսակն ունի բավականին սահմանափակ կիրառություն դասարանում:

• *«Հանպատրաստից դեբատ»:* Դեբատի այս տեսակի իրականացման ժամանակ կողմնորոշման և նախապատրաստման փուլը հասցվում է նվազագույնի: Պատրաստումն իրականացվում է անմիջապես դասի ընթացքում՝ դասագրքի նյութի համաձայն: Դեբատի նման ձևաչափը կարելի է դիտարկել որպես «հետադարձ կապի» տարր, ուսումնական նյութի ամրապնդման կամ ճանաչողական գործունեության բարձրացման ձև:

• *«Փոփոխված դեբատ»*, որում կիրառվում են դեբատի առանձին տարրեր, և թույլատրվում են կանոնների որոշ փոփոխություններ, ինչը հնարավորություն է տալիս ներգրավել ամբողջ խմբին: Այստեղ հնարավոր է փոխել կանոնակարգը, ավելացնել թիմերի բանախոսների քանակը, կազմակերպել «աջակցության խմբեր», որոնց հետ թիմերը կարող են կապվել ընդմիջումների ժամանակ, ստեղծել «փորձագետների խումբ», որը կարող է գործառույթներ իրականացնել մրցավարության, խաղի ամփոփման, թիմերի փաստարկների վերլուծության և կողմերի բախման ժամանակ, մշակել փոխզիջումային լուծում, որը հաճախ անհրաժեշտ է դասարանում՝ ուսումնական նպատակներին հասնելու համար[2]:

Դեբատն ունի նաև որոշակի սահմանափակումներ.

1. դեբատները պետք է մանրամասնորեն նախապատրաստվեն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանց անցկացումը ժամանակատար է և աշխատատար,

2. կարող է լինել շեղվելու հավանականություն, որը քիչ կլինի, եթե ներկայացվող փաստարկները հիմնավորված լինեն,

3. եթե քննարկման ընթացքում թիմում ի հայտ գան առաջնորդներ, հնարավոր է թիմի մյուս մասնակիցների ազատության կաղապարում, կախվածություն,

4. առկա է ոչ ճիշտ եզրահանգումների հավանականություն:

Այսպիսով՝ դեբատը՝ որպես փոխգործուն մեթոդ, ունի իր առավելություններն ու սահմանափակումները: Դրա նպատակային կիրառումն առավել արդյունավետ ու հետաքրքիր

---

[1] *Տե՛ս Щукин А. Н., указ. соч., с. 28:*

[2] *Տե՛ս Светенко Т. В., указ. соч., с. 123:*

է դարձնում ուսումնական գործընթացը՝ նպաստելով սովորողների մի շարք կարևոր հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը:

***Мери Оганнисян, ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ МЕТОДА ДЕБАТОВ.*** Дебаты являются эффективным средством обучения учащихся умению ясно и логично формулировать свою позицию, находить убедительные факты и доводы в поддержку выдвигаемых идей. Навыки, полученные в процессе подготовки к участию в дебатах, применимы во многих научных областях, а также в повседневной жизни.

Реализация метода «Дебатов» в учебном процессе способствует: развитию коммуникативных умений – умения слушать и слышать собеседника, способности сопереживать другим и проявлять с ними солидарность, и развитию ораторских способностей – навыков публичного выступления, уверенности в себе.

Дебаты представляют собой не просто увлекательное занятие, интересный урок, но и эффективное средство для развития обучающихся, формирования у них компетенций, необходимых и полезных для успешной жизнедеятельности в условиях современного общества, в частности компетенции связанной с коммуникацией. Дебаты также формируют у обучающихся представление о структуре речи. Примером сюжетной речи в дебатах может служить план речи первого спикера: приветствие слушателей — представление команды и самого себя — вступление (обоснование актуальности темы) — определение понятий темы — выдвижение критерия — аргументация — заключение — благодарность за внимание. Понимание обучающимися структурных и сюжетных схем речи дебатов позволит им в дальнейшем составить четкий план большинства публичных выступлений.

***Ключевые слова*:** метод обучения, интерактивный метод, дискуссия, дебаты, этапы дебатов, функции дебатов, мотивация, коммуникативные навыки, обсуждение, аргумент.

***Meri Hovhannisyan, FEATURES OF USING THE DEBATE METHOD.*** Debates are an effective means of teaching students the ability to clearly and logically formulate their position, find convincing facts and arguments in support of the ideas put forward. The skills acquired in the process of preparing for participation in debates are applicable in many scientific fields, as well as in everyday life. The implementation of the "Debates" method in the educational process contributes to: the development of communicative skills – the ability to listen and hear the interlocutor, the ability to empathize with others and show solidarity with them, and the development of oratorical abilities – public speaking skills, self-confidence.

Debates are not just an exciting activity, an interesting lesson, but also an effective means for the development of students, the formation of their competencies necessary and useful for successful life in modern society, in particular, the competence related to communication. Debates also form students' understanding of the structure of speech. An example of a plot speech in a debate can be the speech plan of the first speaker: greeting the audience — introducing the team and himself — introduction (justification of the relevance of the topic) - defining the concepts of the topic — putting forward a criterion — argumentation-conclusion — gratitude for attention. Students' understanding of the structural and plot schemes of the debate speech will allow them to make a clear plan for most public speeches in the future.

***Keywords*:** teaching method, interactive method, discussion, debate, stages of debate, functions of debate, motivation, communication skills, discussion, argument.

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

*ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ*

# ИСТОРИЯ И КУЛЬТУРА

*АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ*

# HISTORY AND CULTURE

*JOURNAL OF ARMENIAN STUDIES*

2021, № 1

**Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Մինասյան**

**Խմբագիր՝ Միքայել Մալխասյան**

**Տեխնիկական խմբագիր՝ Տիգրան Ղանալանյան**
**Սրբագրումը՝ Արմեն Մալխասյանի**
**Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Մալխասյանի**

Հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52
Address: 0025, Yerevan, Abovyan 52
E-mail: histcultjournal@gmail.com
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Աբովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

**Տպաքանակը՝ 200**